На это указывает и тот факт, что значение n_s (n_s – число оснований, приходящих на одно место связывания) намного меньше, чем аналогичная величина, полученная для неспецифического или специфического связывания (табл. 1). По всей вероятности, аналогичный эффект возможен и при $\mu=0.002$ М Na^+ , однако этот эффект незначительный и практически не проявляется при низких ионных силах раствора. Тем не менее, небольшое уменьшение величин K_s^* при облучении (примерно в два раза), полученных при 0.002 М Na^+ , может явиться результатом вышеописанного, так как увеличение числа связанных с ДНК молекул воды происходит за счет их отрыва от ионов Na^+ , вследствие чего плотность положительного заряда этих ионов увеличивается, и это может привести к локальному возрастанию положительного потенциала в определенных участках ДНК. Это в свою очередь, приведет к проявлению АТ специфичности молекул лиганда. В то же время с участками ДНК, находящимися в относительно высокогидратированных состояниях, молекулы лиганда связываются интеркаляционным механизмом, что и приводит к взаимному ослаблению этих двух способов. Однако при ионной силе 0.002 М концентрация ионов Na^+ недостаточна для установления соответствующей структуры ДНК, вследствие чего АТ специфическое связывание Н33258 с ДНК существенно не проявляется.

При 0.02 М Na^+ более предпочтительным остается АТ специфическое связывание в противоположность интеркаляционному, несмотря на то что этот способ также проявляется после облучения.

Из данных табл. 1 видно, что значение константы связывания Н33258 с ДНК слабым способом почти на два порядка меньше, чем константа связывания сильным способом при $\mu \leq 0.002$ М Na^+ и на три порядка при $\mu=0.02$ М Na^+ . При облучении значения K_w^* , полученные при указанных ионных силах, мало отличаются друг от друга, при этом практически совпадают также значения K_w , полученные как для необлученных, так и для облученных препаратов при соответствующих ионных силах. Это указывает на то, что облучение ММ ЭМВ практически не влия-

ет на слабый способ, что может быть результатом того, что молекулы лиганда электростатически связываются с фосфатными группами ДНК.




Рис. 1. Кривые связывания H33258 с ДНК в координатах Скетчарда при ионных силах 0.002 (а); 0.005 (б) и 0.02 (в) М Na⁺. Кривые 1 получены для необлученных, кривые 2 - для облученных препаратов.

Таблица 1. Значения констант К и числа мест п связывания необлученных и облученных Н33258 с ДНК

Ионная сила	Необлученные				Облученные			
	$K_s \cdot 10^{-5}$	$K_w \cdot 10^{-5}$	p_s	p_w	$K_s^* \cdot 10^{-5}$	$K_w^* \cdot 10^{-5}$	p_s^*	p_w^*
0.002 М Na ⁺	60±0.15	0.9±0.05	7.0±1.0	1.5±0.5	30±0.15	0.5±0.05	8.0±1.0	1.5±0.5
0.005 М Na ⁺	60±0.20	1.4±0.05	8.0±1.0	2.0±0.5	2.6±0.5	0.23±0.15	2.0±1.0	1.0±0.5
0.02 М Na ⁺	100±0.5	0.45±0.05	10±1.0	2.0±0.5	50±0.2	0.43±0.05	10±1.0	1.5±0.5

Таким образом, из полученных данных выявляется, что Н33258 с ДНК образует два типа комплексов, один из них является сильным и характеризуется высоким значением К ($\approx 10^7$ М⁻¹) и п (≥ 10). Этот тип связывания соответствует специфическому взаимодействию лиганда с АТ богатыми участками ДНК при высоких ионных силах раствора [11,12,19]. При относительно низких ионных силах имеет место уменьшение константы связывания сильным способом ($\approx 10^6$ М⁻¹). Полученные данные также указывают на то, что облучение ММ ЭМВ вызывает увеличение степени гидратации ДНК и существенного изменения структуры системы в целом, что в свою очередь значительно влияет на проявление этого способа связывания Н33258 с ДНК.

Полученные нами данные могут быть полезными при изучении влияния различных биологически активных соединений на функционирование биомакромолекул. Эти данные позволяют также разработать новые подходы для практического применения в биологических системах как низкомолекулярных веществ, так и ММ ЭМВ.

ЛИТЕРАТУРА

1. Вардеванян П.О., Антонян А.П. Изучение комплексов ДНК с лигандами различной природы. Биол. журн. Армении, 62, 3, с. 50-58, 2010.
2. Григорян А.В., Антонян А.П., Шагинян М.А., Манукян Г.А., Карапетян А.Т. Влияние нетепловых электромагнитных волн миллиметрового диапазона на комплексы с ДНК. Биол. журн. Армении, 61, 3, с. 57-62, 2009.
3. Девятков Н.Д., Голант М.В., Бецкий О.В. Миллиметровые волны и их роль в процессах жизнедеятельности. М., Радио и связь, 168с., 1991.
4. Петросян В.И., Синицын Н.И., Елкин В.А. и др. Роль молекулярно-волновых процессов в природе и их использование для контроля и коррекции состояния экологических систем. Биомедицинская радиоэлектроника, 5-6, с. 62-114, 2001.
5. Смолянская А.З., Гельвич Э.А., Голант М.Б., Махов А.М. Резонансные явления при действии электромагнитных волн миллиметрового диапазона на биологические объекты. Успехи совр. биологии, 87, 3, с. 381-392, 1979.
6. Тамбиев А.Х., Кирикова Н.Н. Некоторые новые представления о причине формирования стимулирующих эффектов КВЧ-излучения. Биомедицинская радиоэлектроника, 1, с. 23-33, 2000.
7. Chaires J.B. Energetics of Drug-DNA Interactions. Biopolymers, 44, 3, p. 201-215, 1998.
8. Gandhi O.P. Some basic properties of biological tissues for potential biomedical applications of millimeter waves, 18, 3, p. 295-304, 1983.
9. Germann M. W., Kalisch B. W., van de Sande J.H. Homooligomeric dA.dU and dA.dT sequences in parallel and antiparallel strand orientation: consequence of the 5-methyl groups on stability, structure and interaction with the minor groove binding drug Hoechst 33258. J. Biomol. Struct. & Dyn., 13, 6, p. 953-962, 1996.

10. *Kalantaryan V.P., Vardevanyan P.O., Antonyan A.P. et al.* Influence of Low Intensity Coherent Electromagnetic Millimeter Radiation (EMR) on Aqua Solution of DNA. *Progress in Electromagnetics Research Letters*, 13, p. 1-9, 2010.
11. *Krautbauer R., Pope L.H., Schrader T.E., Allen S., Gaub H.E.* Discriminating small molecule DNA binding modes by single molecule force spectroscopy. *FEBS lett.*, 510, 3, p. 154-158, 2002.
12. *Lane A.N., Jenkins T.C.* Thermodynamics of nucleic acids and their interactions with ligands. *Q. Rev. Biophys.*, 33, 3, p. 255-306, 2000.
13. *Logani M.K., Natarajan M., Makar V.R., Bhanushali A., Ziskin M.C.* Effect of millimeter waves on cyclophosphamide induced NF-kappaB. *Electromagn.Biol Med.*, 25, 1, p. 23-27, 2006.
14. *Nicolas Nicolaz C., Zhadobov M., Desmots F. et al.* Absence of direct effect of low-power millimeter-wave radiation at 60.4 GHz on endoplasmic reticulum stress. *Cell Biol. Toxicol.*, 25, 5, p. 471-478, 2009.
15. *Parkinson J.A., Barber J., Douglas K., Rosamond J., Sharples D.* Minor groove recognition of the self-complementary duplex d(CGCGAATTCGCG)2 by Hoechst 33258: a high-field NMR study. *Biochemistry*, 29, p. 10181-10190, 1990.
16. *Pathing R.* Dielectric and electronic properties of biological materials. Chichester: John Wiley & Sons, 297p., 1979.
17. *Smith C.W.* Electromagnetic effects in humans. In: Frohlich H. (ed.) *Biological coherence and response to external stimuli*. Springer, Berlin Heidelberg New York, p. 205-232, 1988.
18. *Vardevanyan P.O., Antonyan A.P., Parsadanyan M.A., Davtyan H.G., Karapetyan A.T.* The binding of ethidium bromide with DNA: interaction with single- and double-stranded structures. *Experimental and Molecular Medicine*, 35, 6, p. 527-533, 2003.
19. *Vardevanyan P.O., Antonyan A.P., Parsadanyan M.A., Pirumyan K.V., Muradyan A.M., Karapetian A.T.* Influence of Ionic Strength on Hoechst 33258 Binding with DNA. *Biomol. Struct. Dyn.*, 25, 6, p. 641-646, 2008.

Поступила 18.01.2012



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(64), 2012

ԻԶԵՎԱՆԻ ՖԼՈՐԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ն.Գ. ՔԱՐՏԱՇՅԱՆ

Երևանի պետական համալսարան, բուսաբանության ամբիոն
nunekartashyan@gmail.com

Հոդվածում բերվում են Հայաստանի Հանրապետության Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի (նախկին Շամշադինի վարչական շրջան) բուսականության ուսումնասիրության արդյունքները: Կամելինի կողմից առաջարկված սխեմայի կիրառմամբ ներկայացվում են ֆլորոցենոտիպերը, դրանց ֆորմացիաների խմբերը: Դիտարկվել են բուսածածկույթի մակրոզոնալ բոլոր տիպերը:

Բուսականության դասակարգում – ֆլորոցենոտիպեր – ֆորմացիաների խմբեր

В статье приведены результаты исследований растительности северо-восточной части Иджеванского флористического района Республики Армения (бывший Шамшадинский административный район). Представлены флороценотипы и группы формаций по схеме Камелина. Рассмотрены все макрозональные ти-пы растительного покрова исследуемого района.

Классификация растительности – флороценотипы – группы формаций

The results of study of vegetation of the north-eastern part of Ijevan floristic district of Armenia (former Shamshadin administrative region of Armenia) were presented. Florocoenotypes and groups of formations were represented according Kamelin's scheme. All the macrozonal types of vegetation were considered.

The classification of vegetation – florocoenotype – groups of formations

Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածը (նախկին Շամշադինի վարչական շրջանի տարածքը) ընկած է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելքում: Հարավից սահմանակից է Միափորի լեռնաշղթային, արևմուտքից՝ Աղստև և Հախում գետերի ջրբաժանին, իսկ հյուսիսից ու արևելքից՝ Ադրբեջանի Հանրապետությանը: Տարածությունը 824 կմ² է: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածը գտնվում է Միափորի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջին, որի ամենաբարձր կետը Մուրղուզ լեռնագագաթն է (ծովի մակարդակից 2993 մ բարձրությամբ):

Կլիման բարեխառն ցամաքային է՝ տաք ամառներով, մեղմ ձմեռներով: Կախված տեղանքի բարձրությունից կլիմայական պայմանները տարբեր են: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի ցածրադիր վայրերում տարեկան միջին ջերմաստիճանը +10°C, բարձրադիր վայրերում (Միափորի լեռնաշղթայի գագաթ)՝ 0°C: Առավելագույն ջերմաստիճանը +38°C է, նվազագույնը՝ -20°C:

Հողային ծածկույթը, կապված բնական պայմանների բազմազանության հետ, նույնպես բազմազան է: Ցածրադիր վայրերում՝ ծովի մակարդակից 800-1000 մ բարձրության վրա հանդիպում են բաց շագանակագույն կիսատափաստանային հողեր, 900-1300մ՝ մուգ շագանակագույն մարգագետնային, 1300-2100մ՝ լեռնա-տափաստա-

նային ու անտառային, 2100մ-ից բարձր՝ լեռնամարգագետնային, մերձալպիական և ալպիական շագանակագույն հողեր:

Ըստ Թախտաջանի ֆլորիստական շրջանացման, մեր կողմից ուսումնասիրվող ֆլորիստական շրջանը գտնվում է Բորեալ ենթաթագավորության Կովկասյան պրովին-ցիայում [18, 19]:

Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսականության խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը հրատապ խնդիր է, քանի որ նշված շրջանը քիչ է ուսումնասիրված և հյուսիս-արևելյան հատվածում չեն կատարվել նպատակային հետազոտություններ:

Ներկայումս կենսաբազմազանության պահպանությունն ու կայուն օգտագործումը համընդհանուր հիմնախնդիր է: Անթրոպոգեն գործոնի ազդեցության հետևանքով, Իջևանի ֆլորիստական շրջանի անտառածածկ տարածքների կրճատումից բացի, փոխվել են ծառատեսակային կազմը և զբաղեցրած տարածքները, լեռնային արոտավայրերը և գերխոնավ տարածքները: Ծառուտները կորցրել են իրենց ինքնավերականգնման ունակությունը, շատ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Հետևաբար, ուսումնասիրության արդիականությունը կայանում է նրանում, որ այն կնպաստի արժեքավոր տեսակների գենոֆոնդի և ցենոֆոնդի պահպանմանն ու վերարտադրությանը:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրության համար նյութ են ծառայել 2006-2011թթ. ժամանակահատվածում Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածից հավաքած սեփական հերբարիումները, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի բուսապահոցներում պահպանվող հերբարիումային նմուշները:

Բուսականության դաշտային ուսումնասիրությունները և սեփական հավաքները կատարվել են երթուղային և կիսաստացիոնար մեթոդներով: Անտառագիտական տերմինները ձշտելու համար օգտվել ենք համապատասխան տերմինաբանական բացատրական բառարանից [1]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսականության դասակարգման համար հիմք է հանդիսացել Կամելինի սխեման [11], որը մշակված է Միջին Ասիայի համար, նկատի ունենալով Կովկասի և Միջին Ասիայի միանման լեռնագրական և գոնալ-լայնության պայմանները, ինչպես նաև այդ սխեմայի կիրառման փորձերից՝ Հարավային Հայաստանի (Մեղրի) [14] և Շիրակի [20]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտության արդյունքում Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսածածկում նկարագրվել են ֆորմացիաների խմբերը և ֆլորոցենոտիպերը: Ներկայացվել են բուսականության մակրոգոնալ գրեթե բոլոր տիպերը: Անդրադառնալով բուսականության զարգացման պատմությանը, հայտնի է, որ յուրաքանչյուր երկրի բուսական ծածկի բնույթը և կազմը կախված է ոչ միայն ժամանակակից ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից, այլև դրանց ձևավորման պատմությունից: Հայաստանի ժամանակակից բուսականությունը ձևավորվել է վերին-երրորդական ժամանակաշրջանի (միոցեն) ավելի խոնավասեր և ջերմասեր բուսականության վերափոխման արդյունքում [17]:

Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի ֆլորայի և բուսականության զարգացման պատմությունը անքակտելիորեն կապված է Հայաստանի ամբողջ ֆլորայի և բուսականության պատմության հետ: Ցավոք, մեր կողմից ուսումնասիրվող շրջանի վերաբերյալ չկան հնէաբուսաբանական և հնէապալիոլոգիական տվյալներ:

Բնական է, որ Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի ֆլորայի և բուսականության զարգացման ժամանակաընթացքում փոփոխություններ է կրել շրջանի ուսումնասիրվող հատվածի բուսական ֆորմացիաների ամբողջ համալիրը: Մեր կողմից ուսումնասիրվող հատվածում գերակշռում է անտառային բուսականությունը: Վերին-երրորդական ժամանակաշրջանում Կովկասում բավական լայնորեն տարածված են եղել տերևաթափ լայնատերև անտառները, հաճախ անսովոր խոնավ և սովերոտ, մշտադալար երկշաքիլավորների և հնագույն ասեղնատերևավորների խառնուրդով [16]: Սակայն Կովկասում իրար հաջորդող սառցապատումները աստիճանաբար փոխեցին բուսականության բոլոր այդ տիպերի քանակական հարաբերակցությունները, աղքատացան և չափերով փոքրացան անձրևային անտառները, ընդլայնվեցին ավելի բարեխառն տիպի անտառների տարածման մակերեսները և նպաստեցին մի շարք այլ բուսական ֆորմացիաների զարգացմանը: Կլիմայի հետագա փոփոխությունների արդյունքում ձևավորվեց Հայաստանի ներկայիս անտառային լանդշաֆտի կենսաբազմազանությունը:

Ներկայացնենք Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսականության դասակարգումը ըստ Կամելիի սխեմայի: Ստորև պատկերվում է Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսական ֆորմացիաների բաշխումը ըստ ֆլորոցենոտիպերի (աղ. 1):

Աղյուսակ 1. Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսական ֆորմացիաների բաշխումը ըստ ֆլորոցենոտիպերի

Հումիդային տիպերի խումբ
Սաղարթավոր անտառ
Բարձրախոտեր
Կրիոհումիդային տիպերի խումբ
Կորաբուն անտառ
Մարգագետիններ
Կրիոմեզոֆիլ խոտաբույսերի գորգեր
Բարձրալեռնային ճահիճներ
Մեմֆիոհումիդային տիպերի խումբ
Փշատերևների թավուտ
Մարգագետնատափաստան
Տափաստանային թփուտներ
Մեմֆարիդային տիպերի խումբ
Գիհուտներ կամ թեփուկափշատերև անտառ
Շիբլակ
Իրանա-թուրանական ֆրիգանոիդներ
Էֆեմերետում
Լեռնային տափաստաններ
Էքստրեմարիդային տիպերի խումբ
Թուրանական կիսաթփուտային անապատ
Ողողվող անտառ գետահովիտներում
Պետրոֆիլ բուսականություն (Պետրոֆիտոն)
Քսերոփիտոն, ժայռերի քսերոֆիլ բուսականություն
Քսերոխազմոֆիտոն, տաք սողանքների բուսականություն
Հիգրոֆիլ բուսականություն
Հիգրոֆիլ դաշտավլուկազգիներ և խոտաբույսեր
Հիդրոֆիլ բուսականություն

Հումիդային տիպերի խումբ

Սաղարթավոր անտառ: Միավորում է մեզոթերմ տերևաթափ մեզոֆիլ ծառերի և թփերի ֆորմացիաների խմբավորումներ [5]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է միջին լեռնային գոտում [8]: Այդ ֆորմացիաներն են՝ *Fagus orientalis* Lipsky, *Quercus macranthera* Fisch. et Mey. ex Hohen., *Q. iberica* Stev.:

Բարձրախոտեր: Միավորում է մեզոթերմ խոշոր մեզոֆիլ երկարատև վեգետացիայի բազմամյա խոտաբույսերի ֆորմացիաների խմբավորումներ: Մեր կողմից ուսումնասիրվող հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է մերձալպյան գոտում: Բարձրա-խոտերի կազմում հետևյալ տեսակներն են՝ *Heracleum antasiaticum* Manden., *H. sosnowskyi* Manden., *H. trachyloma* Fisch. et Mey., *Anthriscus sylvestris* (L.) Hoffm., *Rumex obtusifolius* L., *Polygonum argyrocoleum* Steud. ex G. Kunze, *P. patulum* Bieb., *Cicerbita macrophylla* (Willd.) Wallr., *Delphinium flexuosum* Bieb., *Aconitum orientale* Mill. և այլն:

Կրիոհումիդային տիպերի խումբ

Կորաբուն անտառ: Միավորում է միկրոթերմ տերևաթափ հիգրոմեզոֆիլ և մեզոֆիլ ծառերի ու թփերի ֆորմացիաների խմբավորումներ [1]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է մերձալպյան գոտում [7,8]: Այդ ֆորմացիաներն են՝ *Betula pendula* Roth, *Sorbus aucuparia* L.:

Մարգագետիններ: Միավորում է միկրոթերմ, մասամբ մեզոթերմ մեզոֆիլ և հիգրոմեզոֆիլ բազմամյա խոտաբույսերի, հատկապես վերարմատ մարգագետնային դաշտավլուկազգիների ֆորմացիաների խմբավորումներ: Մեր կողմից ուսումնասիրվող հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է մերձալպյան և ալպյան գո-

տիներում [12]: Մարգագետինների կազմում հետևյալ տեսակներն են՝ *Poa trivialis* L., *Agrostis stolonifera* L., *A. gigantea* Roth, *Festuca pratensis* Huds., *Filipendula vulgaris* Moench, *Vicia tenuifolia* Roth, *Carex divulsa* Stokes, *Thalictrum minus* L. և այլն:

Կրիումեզոֆիլ խոտային գորգեր: Միավորում է միկրոթերմ ցածր կրիումեզոֆիտ բազմամյա խոտաբույսերի ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ալպիական գոտում [13]: Կրիումեզոֆիլ խոտային գորգերի կազմում հետևյալ տեսակներն են՝ *Nardus stricta* L., *Festuca ruprechtii* (Boiss.) V.I. Krecz. & Bobrov, *Anthoxanthum odoratum* L., *Bromopsis variegata* (M. Bieb.) Holub, *P. alpina* L., *Carex capitellata* Boiss. & Bal., *C. tristis* M. Bieb., *Allium schoenoprasum* L., *Taraxacum stevenii* DC., *Campanula collina* Sims subsp. *collina* Bieb., *C. saxifraga* Bieb. subsp. *aucherii* A.DC.: Այս խմբավորումները հանդիպում են հետևյալ տեսակների՝ *Alchemilla grossheimii* Juz., *Sibbaldia parviflora* Willd., *Campanula tridentata* Schreb. subsp. *tridentata*, *C. stevenii* Bieb. subsp. *stevenii*, *Minuartia imbricata* (Bieb.) Woronow, *Veronica gentianoides* Vahl, *Koeleria albobii* Domin subsp. *fominii* (Domin) Tzvelev, *K. albobii* Domin subsp. *caucasica* (Domin) Tzvelev, *Arenaria rotundifolia* Bieb. մասնակցությամբ, հալվող ձյան մոտ՝ *Crocus adamii* J. Gay, *Merendera raddeana* Regel, *Gagea caroli-kochii* Grossh. և այլ տեսակների մասնակցությամբ [2]:

Բարձրալեռնային ճահիճներ: Միավորում է ցածր միկրոթերմ կրիոհիգրոֆիտ բազմամյա խոտաբույսերի ֆորմացիաների խմբավորումներ [4]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում տարածված է ալպիական գոտում: Խմբավորումներն են՝ *Juncus effusus* L., *J. articulatus* L., *Luzula stenophylla* Steud., *Carex capitellata* և այլն:

Սեմիհումիդային տիպերի խումբ

Փշատերևների թավուտ: Բարեխառն ու լեռնային չափավոր տաք ֆլորաների ֆլորոցենոտիպ է, որը միավորում է միկրո- (և մեզո-) թերմ քսերոմեզոֆիտ մշտադալար և ամառնականաչ հելիոֆիլ փշատերև ծառերի (սոճի և կենի) ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է միջին և վերին լեռնային գոտիներում [3, 6]: Այդ ֆորմացիաներն են՝ *Pinus hamata* D. Sosn., *Taxus baccata* L.:

Մարգագետնատափաստան: Միավորում է մեզոթերմ մեզոքսերոֆիտ բազմամյա խոտաբույսերի, հատկապես դաշտավտակազգիների ֆորմացիաների խմբավորումներ [12]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է վերին և մերձալպյան գոտիներում: Մարգագետնատափաստանի կազմում հետևյալ տեսակներն են՝ *Koeleria albobii* subsp. *fomini*, *Phleum phleoides* (L.) Karst., *Festuca woronowii* Hack. subsp. *caucasica* (St.-Yves) E.B. Alexeev, *Hordeum violaceum* Boiss. & Huet, *Anthoxanthum odoratum*, *Dactylis glomerata* L.:

Տափաստանային թփուտներ: Միավորում է օլիգոթերմ և հազվադեպ մեզոթերմ տերևաթափ մեզոքսերոֆիլ թփուտների ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է միջին և վերին լեռնային գոտիներում: Այդ ֆորմացիաներն են՝ *Spiraea hypericifolia* L., *Rhamnus cathartica* L., *Rosa spinosissima* L.:

Սեմիարիդային տիպերի խումբ

Գրիտուտներ կամ թեփուկափշատերև անտառներ: Միավորում է մեզոթերմ թեփուկափշատերև մշտականաչ քսերոֆիլ և մեզոքսերոֆիլ ծառերի ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է միջին, հազվադեպ ստորին, լեռնային գոտում [9]: Ֆորմացիայի խմբավորումներն են՝ *Juniperus oblonga* Bieb., *J. polycarpus* C. Koch, *J. hemisphaerica* J. et C. Presl:

Շիբլյակ: Միավորում է մեզոթերմ հելիոֆիտ տերևաթափ քսերոֆիտ ծառերի և ծառանման աերոքսիլ թփերի ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին լեռնային և մասամբ նախալեռնային գոտում [10, 12]: Ֆորմացիան է՝ *Paliurus spina-christi* Mill., մասնակցություն ունեն նաև *Amygdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Celtis caucasica* Willd., *Jasminum fruticans* L., *Rhamnus spathulifolia* Fisch. et Mey. տեսակները:

Իրանա-թուրանական ֆրիգանոիդներ: Ֆլորոցենոտիպը միավորում է մեզոթերմ (հազվադեպ օլիգոթերմ), քսերոֆիլ և մեզոքսերոֆիլ կիսաթփերի ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան

հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին և միջին լեռնային գոտի-ներում [15]: Մեր կողմից ուսումնասիրվող հատվածում ներկայացված են *Artemisia fragrans* Willd., *Hymenocrater bituminosus* Fisch. et Mey. ֆորմացիաները:

Այս ֆլորոցենոտիպի խմբավորումներից առանձնահատուկ դեր են խաղում տոմիլյարները՝ շրթնածաղկավորների գերակշռությամբ, որոնց կարելի է առանձնացնել որպես ենթատիպ: Տոմիլյարներ ենթատիպի խմբավորումներից են՝ *Thymus kotschyanus* Boiss. et Hohen, *Teucrium polium* L., *Marrubium vulgare* L., *M. Catarifolium* Desr., *Nepeta mussinii* Spreng.:

Էֆեմերներում: Ֆլորոցենոտիպը միավորում է էֆեմերներ՝ մեզոթերմ մեզոքսերոֆիլ միամյա բույսերի խմբավորումներ, որոնք զարգանում են վաղ գարնանը՝ խախտված աճելավայրերում: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է նախալեռնային գոտում: Այդ ֆորմացիաներն են՝ *Vulpia myuros* (L.) C.C. Gmel., *Aegilops triuncialis* L., *Anisantha tectorum* (L.) Nevski:

Լեռնային տափաստաններ: Ֆլորոցենոտիպը միավորում է օլիգոթերմ քսերոֆիլ բազմամյա խոտաբույսերի, հատկապես ճիմային դաշտավլուկազգիների, ինչպես նաև երկարատև վեգետացիայի տափաստանային կրիոքսերոֆիտ խոտաբույսերի ֆորմա-ցիայի խմբավորումներ [20]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է միջին և վերին լեռնային գոտիներում: Ֆլորոցենոտիպը շատ հետերոգեն է:

Իսկական տափաստանի ֆորմացիաներն են՝ *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. pulcherrima* K. Koch, *Festuca brunnescens* (Tzvelev) Galushko: Լեռնային բազմախոտային տափաստանների կամ լեռնային տափաստանային խոտաբույսերի կազմում են հետևյալ տեսակները՝ *Scabiosa micrantha* Desf., *Xeranthemum squarrosum* Boiss., *Achillea millefolium* L. [20]:

Էքստրեմալիտային տիպերի խումբ

Թուրանական կիսաթփուտային անապատ: Միավորում է օլիգոթերմ և մեզոթերմ էվքսերոֆիտ կիսաթփուտների, հազվադեպ թփերի ֆորմացիաների խմբավորումներ [14]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին լեռնային գոտում: Թուրանական կիսաթփուտային անապատի կազմի մեջ են ընդգրկվում հետևյալ տեսակները՝ *Atraphaxis spinosa* L., *Noaea mucronata* (Forssk.) Aschers. et Schweinf.:

Ողողվող անտառ գետահովիտներում: Միավորում է հիդրոֆիլ մեզոթերմ հազվադեպ օլիգոթերմ տերևաթափ ծառերի ֆորմացիաներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին լեռնային գոտում: Այդ ֆորմացիաներն են՝ *Salix alba* L., *S. excelsa* S.G. Gmel, *Ulmus carpinifolia* Rupp. ex Suckow:

Պետրոֆիլ բուսականություն (Պետրոֆիտոն)

Քսերոլիտոֆիտոն, ժայռերի քսերոֆիլ բուսականություն: Միավորում է մեզոթերմ քսերոֆիտ և մեզոքսերոֆիտ կիսաթփերի, բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ թփիկների խիստ լիտոֆիտներով ֆորմացիաների խմբավորումներ [14]: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտի: Քսերոլիտոֆիտոն, ժայռերի քսերոֆիլ բուսականության կազմում են հետևյալ տեսակները՝ *Parietaria judaica* L., *Rosularia sempervivum* (Bieb.) Berger, *Sedum gracile* C.A. Mey., *S. pallidum* Bieb. և այլն:

Քսերոխազմոֆիտոն, տաք փլվածքների բուսականություն: Միավորում է մեզո- և օլիգոթերմ քսերո-մեզոֆիտ բազմամյա խոտաբույսերի, սովորաբար երկարաճող քսերոֆիտների ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին, միջին, վերին լեռնային գոտիներում: Հետևյալ տեսակները՝ *Cirsium ciliatum* (Murray) Moench, *Stachys atherocalyx* C. Koch և այլն, ներառվում են այս բուսականության կազմում:

Հիգրոֆիլ և հիդրոֆիլ բուսականություն

Հիգրոֆիլ բուսականություն: Միավորում է օլիգո-մեզոթերմ հիգրոֆիտ բույսերի ֆորմացիաների խմբավորումներ: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում այս ֆլորոցենոտիպը տարածված է ստորին լեռնային գոտուց մինչև միջին լեռնային գոտի: Այդ ֆորմացիաներն են՝ *Epilobium hirsutum* L., *E. parviflorum*

Schreb., *Mentha longifolia* (L.) L., *Veronica persica* Poir., *Typha latifolia* L., *Phragmites australis* (Cav.) Trin. ex Steud. և այլն:

Հիդրոֆիլ բուսականություն: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում չկան բնական լճեր և հիդրոֆիլ բուսականությունը թույլ է զարգացած, հանդիպում է միայն գետերում, առվակներում, աղբյուրներում: Այն ինչպես և այլ լեռնային շրջաններում ինտրագոնալ է զարգանում [4]: Միավորում է օլիգո-մեզոթերմ և օլիգոթերմ հիդրոֆիտ բույսերի ֆորմացիաների խմբավորումներ: Հիդրոֆիտ բույսերի կազմում հետևյալ տեսակներն են՝ *Polygonum amphibium* L., *Catabrosa aquatica* (L.) P. Beauv., *Sparganium emersum* Rehm., *Butomus umbellatus* L. և այլն: Իջևանի ֆլորիստական շրջանի հյուսիս-արևելյան հատվածի բուսականության դասակարգման հիման վրա ներկայացվեց Կամեյիի սխեմայի ֆորմացիաների խմբերը, որոնք պատկանում են 20 ֆլորոցենոտիպի, որոնցից ամենամեծ մակերեսները զբաղեցնում են սաղարթավոր անտառները, կրիո-մեզոֆիլ խոտային գորգերը, ոչ մեծ մակերեսները՝ շիբլակները, փշատերևների թավուտը, գիհուտները: Թույլ են ներկայացված տափաստանային թփուտները, բարձրալեռնային ճահիճները, գրեթե չկան տրագալկանտներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Վարդանյան Ժ.Հ., Սյալանյան Հ.Յ.* Անտառագիտական և կանաչապատման տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան: Եր., ՀՀ ԳԱԱ Բուս. ինստ. հրատ. 337 էջ, 2008:
2. *Ասլանյան Յ.Գ.* Растительность Северной Армении в пределах Шамшадинского района. Бот. журн., 35, 1951.
3. *Бадалян В.Л.* Древостой тисса ягодного (*Taxus baccata* L.) в Айгедзоре (Армения). Известия аграрной науки, 9, 4, Грузия, Тбилиси, с. 126-128, 2011.
4. *Барсегян А.М.* Водно-болотная растительность Армянской ССР. Изд-во АН Армянской ССР, Ереван, 350 с., 1990.
5. *Варданян Ж.А.* Деревья и кустарники Армении в природе и культуре. Ереван, 367 с., 2003.
6. *Григорян Р.А.* Сосна кавказская в лесах Шамшадина. Известия АН Арм ССР, XVIII, 3, с. 81-86, 1965.
7. *Григорян Р.А.* Динамика поясного распределения лесной растительности в Северной Армении. Известия ГАУА, 1, с. 15-20, 2008.
8. *Григорян Р.А.* Основные лесные формации Мургузского хребта и их вертикальное распределение. Флора, растительность и растительные ресурсы Арм. ССР, вып. 5, с. 89-104, 1970.
9. *Иванова А.В.* Можжевельниковые редколесья Южной Армении. Тр. Бот. инст. АН Арм. ССР, 4, с. 109-155, 1946.
10. *Иванова А.В.* О лиственных ксерофильных редколесьях Армении. Тр. Бот. инст. АН Арм. ССР, 8, с. 93-172, 1950.
11. *Камелин Р.В.* Кухистанский округ горной Средней Азии. Ботанико-географический анализ. Комаровские чтения, Л., 31, 117 с., 1979.
12. *Магакьян А.К.* Растительность Армянской ССР. М.-Л., 276 с., 1941.
13. *Оганесян М.И.* Альпийские луга Шамшадинского района Армянской ССР. Известия, Ереван, VII, 10, 1954.
14. *Сагатеян А.А.* Синонимика типов растительных сообществ на примере классификации растительности Мегринского флористического района Армении. Флора, растительность, растительные ресурсы Армении, 12, с. 65-68, 1999.
15. *Тахтаджян А.Л.* Ксерофильная растительность скелетных гор Армении. Тр. АрмФАН СССР, 2, с. 62-130, 1937.
16. *Тахтаджян А.Л.* Ботанико-географический очерк Армении. Тр. Бот. инст. Арм. ФАН СССР, 2, с. 1-179, 1941.
17. *Тахтаджян А.Л.* К истории развития растительности Армении. Тр. Бот. инст. АН АрмССР, 4, с. 51-107, 1946.
18. *Тахтаджян А.Л.* Карта районов флоры Арм. ССР, 1, Ереван: АН Арм ССР, с. 3, 1954.
19. *Тахтаджян А.Л.* Флористические области Земли. М.-Л., Наука, 248 с. 1978.
20. *Файвуш Г.М.* Флора и растительность Ширака (Арм. ССР). Автореф. дисс. канд. биол. наук., Ереван, 24 с. 1983.

Ստացվել է 03.10.2011



Փորձարարական և տեսական հոդվածներ • Экспериментальные и теоретические статьи
Experimental and theoretical articles

Հայաստանի կենսաբ. հանդես, 1(64), 2012

**ԱՂԵՆԻՆԸ ԵՎ ԱՂԵՆՈՋԻՆԸ ԴԵՋԱՍԻՆԱՑՆՈՂ ՖԵՐՄԵՆՏՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋ ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋՈՎ ՀԻՎԱՆԴ
ՍԱԴԴԱՆՑ ԱՐՅԱՆ ՄԵՋ**

Մ.Ա. ԴԱՎԹՅԱՆ, Մ.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ն.Ն. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Գ.Հ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

*Երևանի պետական համալսարան, կենսաքիմիայի ամբիոն
nn.hayrapetyan@gmail.com*

Բժշկության դժվարին խնդիրներից է թոքերի տուբերկուլյոզի ճանաչողական տարբերակումը և ախտորոշումը: Հիվանդության բացահայտման համար առաջարկված են ախտորոշման տարբեր մեթոդներ: Մեր կողմից հետազոտվող ֆերմենտները՝ ադենազը, ադենոզինդեզամինազը նույնպես կարող են ծառայել տուբերկուլյոզի բացահայտման ճշգրիտ գործոն, քանի որ հիվանդության դեպքում արյան էրիթրոցիտներում նշված ֆերմենտների ակտիվությունը զգալի բարձրանում է:

Ադենազ - ադենոզինդեզամինազ - էրիթրոցիտներ - տուբերկուլյոզ

Диагностика и отличительное распознавание туберкулеза легких являются трудной задачей для медиков. Для выявления болезни предложены различные методы диагностики. Исследуемые нами ферменты (аденаза и аденозиндезаминаза также могут служить фактором диагностирования туберкулеза, поскольку в эритроцитах крови при болезни наблюдается значительное повышение активности данных ферментов.

Аденаза - аденозиндезаминаза - эритроциты - туберкулез

The distinctive recognition of tuberculosis is a hard problem for doctors. There are many different methods of diagnostics of disease identification. The enzymes investigation, namely adenase and adenosine deaminase, can be used as factors of diagnostics of lung tuberculosis, since the increased activities of these enzymes were observed in blood erythrocytes during this disease.

Adenase - adenosine deaminase - erythrocytes - tuberculosis

Հայտնի է, որ բջիջների կենսագործունեությունը ուղեկցվում է ամոնիակառաջացմամբ, ինչը ազոտապարունակող միացությունների կատաբոլիզմի հետևանք է: Ամոնիակի աղբյուր են հանդիսանում նաև նուկլեինաթթուները: Նուկլեինաթթուների կատաբոլիզմը իրականացվում է նուկլեազներով, նուկլեոզիդազներով, նուկլեոտիդազներով: Վերջին ֆերմենտների ազդեցությամբ գոյացած ազոտային հիմքերը դեզամինացվում են սպեցիֆիկ ֆերմենտներով, դրանցից են ադենինդեզամինազը, ադենոզինդեզամինազը: Երկար ժամանակ տիրում էր այն կարծիքը, որ ադենազը բնորոշ է ստորակարգ օրգանիզմներին, իսկ բարձրակարգ օրգանիզմներում գործում է ադենոզինդեզամինազը [10]: Սակայն վերջին տարիների հետազոտությունները ցույց տվեցին, որ ադենազը ունի բավականին լայն տարածվածություն և հանդիպում է նաև բարձրակարգ օրգանիզմներում [1]: Սակայն, բարձրակարգ օրգանիզմներում ադենինի դեզամինացման հարցերը դեռևս բավարար ուսումնասիրված չեն: Եղած տվյալները վկայում են, որ ադենազը հայտնաբերվել է մարդու արյան շիճուկում նաև զանազան պաթոլոգիաների դեպքում (ուռուցքներ, լեյկեմիա, աթերոսկլերոզ) [5]: Սա հնա ըավորություն է տալիս ֆերմենտի ակտիվության որոշումը կիրառել կլինիկայում, որպես դիագնոստիկ թեստ:

Ֆերմենտի ակտիվության փոփոխություն է նկատվում հեպատիտով, ցիրոզով, ինֆեկցիոն մոնոնուկլեոզով տառապող հիվանդների մոտ, տարբեր օրգանների տուբերկուլյոզային հիվանդությունների դեպքում [12]: Մեր կողմից հետազոտվել է տուբերկուլյոզով հիվանդների արյան պլազման, էրիթրոցիտար զանգվածը: Մինչ մեզ ցույց է տրվել, որ արյան ձևավոր տարրերում նշված ֆերմենտը առկա է և նրա ակտիվությունը ընկճվում կամ բարձրանում է կախված հիվանդությունից [5]: Մասնավորապես, խրոնիկ լիմֆոլեյկոզի, խրոնիկ միելոլեյկոզի, սուր լեյկոզի ժամանակ աղենագի ակտիվությունը էրիթրոցիտներում ընկնում է, մինչ դեռ նշված հիվանդությունների դեպքում թրոմբոցիտներում ֆերմենտը ցուցաբերում է մոտ 20 անգամ բարձր ակտիվություն [3]: Նույն օրինաչափությունը նկատվել է նաև հեմոբլաստոզով տառապող կապիկների մոտ [4]: Ավելի ցայտուն տվյալներ են ստացվել աղենոզինդեզամինազի վերաբերյալ: 1972թ. բացահայտվել է, որ իմունոդեֆիցիտի ժամանակ երևան են գալիս պուրինային փոխանակության ֆերմենտատիվ խախտումներ, մասնավորապես փոփոխվում է լայն տարածում ունեցող աղենոզինդեզամինազ ֆերմենտի ակտիվությունը [8,13]: Այս ֆերմենտի ակտիվության բարձրացում է գրանցվում ուռուցքով, լեյկեմիայով, աթերոսկլերոզով տառապող հիվանդների մոտ [11]: Առանձնապես տպավորիչ են տուբերկուլյոզի ժամանակ աղենոզինդեզամինազի կրած փոփոխությունները [6]: Ֆերմենտի ակտիվության փոփոխությունը (բարձրանում է մոտ 3 անգամ) կիրառվում է որպես տուբերկուլյոզային պլերիտի վաղ ախտորոշման հավաստի հատկանիշ և բուժման ընթացքի վերահսկումը թուլատրող միջոց [9]: Աղենոզինդեզամինազը առաջարկվել է, որպես պլերայում, պերիկարդում, որովայնային հեղուկներում տուբերկուլյոզի բացահայտման օգտակար փոխարինող մարկեր [14]: Որոշ ուսումնասիրություններ հաստատել են աղենոզինդեզամինազի ակտիվության որոշման կարևորությունը ցիրոզով հիվանդների մոտ որովայնային տուբերկուլյոզի դիագնոստիկայի առումով, քանի որ այս դեպքում հիվանդության կլինիկական պատկերը տարբերվում է [15]: Գրականության մեջ եղած տվյալները վկայում են, որ չկան պաթոլոգիաների դեպքում աղենոզինդեզամինազին և աղենինդեզամինազին վերաբերող միաժամանակ իրականացվող հետազոտություններ: Բացը լրացնելու նպատակով, մենք կատարել ենք հետազոտություններ ուղղված աղենազի և աղենոզինդեզամինազի ակտիվության որոշմանը առողջ և տուբերկուլյոզով ախտահարված մարդկանց արյան պլազմայում և էրիթրոցիտներում զուգահեռաբար և ստացված տվյալները ամփոփել ենք այս հոդվածում: Կատարվել են ուսումնասիրություններ նվիրված վերը նշված ֆերմենտների բացահայտմանը և կրած փոփոխություններին:

Նյութ և մեթոդ: Օբյեկտ են հանդիսացել առողջ և տուբերկուլյոզով ախտահարված մարդկանց արյան պլազման և էրիթրոցիտար զանգվածը: Արյունը վերցվել է թոքախտային բաժանմունքից: Որպես հակակոագուլյանտ օգտագործվել է Na-ցիտրատի լուծույթ, որը ավելացվել է արյանը 1:9 հարաբերությամբ: Էրիթրոցիտների սուսպենզիայի հոմոգենատները պատրաստվել են K-ֆոսֆատային բուֆերում, pH=7,4: Հոմոգենատներն ինկուբացվել են 37°C, 90 րոպե տևողությամբ: Ռեակցիան կանգնեցվել է 20% ԵԲԲ-ով: Ամոնիակի քանակությունը որոշվել է միկրոդի-ֆուզիոն եղանակով [2]:

Արդյունքներ և քննարկում: Մեր կողմից կատարված աշխատանքների նպատակն էր պարզել աղենոզինդեզամինազի և աղենազի վարքագիծը և որոշ հատկությունները առողջ և տուբերկուլյոզով հիվանդ մարդկանց արյան պլազմայում և էրիթրոցիտներում:

Աղ. 1-ում ցույց են տրված երկու ֆերմենտների ակտիվության որոշման արդյունքները առողջ և հիվանդ մարդկանց արյան պլազմայում և էրիթրոցիտներում: Տվյալները վկայում են, որ աղենազային ակտիվությունը հիվանդների արյան պլազմայում որոշ չափով նվազում է (19,28 մկմ և 16,6 մկմ համապատասխանաբար): Ի տարբերություն արյան պլազմայի, էրիթրոցիտներում հիվանդության դեպքում աղենազը ցուցաբերում է 3 անգամ ավելի բարձր ակտիվություն (20,09 մկմ և 62,54 մկմ 1գ հյուսվածքում համապատասխանաբար): Ինչ վերաբերում է աղենոզինդեզամինազին, ապա այս ֆերմենտը և առողջ և հիվանդ օրգանիզմների արյան պլազմայում ցուցաբերում է գրեթե նույն ակտիվությունը (23,59 մկմ և 22,87 մկմ համապատասխանաբար), սակայն հիվանդների էրիթրոցիտներում ֆերմենտը 3 անգամ ավելի ակտիվ է (69,8 մկմ և 184,53 մկմ): Այսինքն, որոշակիորեն կարելի է ասել, որ տուբերկուլյոզի ժամանակ հետազոտվող ֆերմենտների ակտիվությունը էրիթրոցիտներում կտրուկ բարձրանում է: Հետազոտությունների հաջորդ

վույլում մենք էրիթրոցիտների հոմոգենատը ցենտրիֆուգել ենք 20 րոպե, 9000 g-ի պայմաններում և պարզել ուսումնասիրվող ֆերմենտների ներքոջային լոկալիզացիան:


Աղյուսակ 1. Ադենինի և ադենոզինի դեզամինացումը առողջ և թոքախտով հիվանդ մարդկանց արյան հոմոգենատներում (մկմ 1 գ հյուսվածքում)

Ֆերմենտներ	Էրիթրոցիտներ		Լեյկոցիտներ		Արյան պլազմա	
	առողջ	հիվանդ	առողջ	հիվանդ	առողջ	հիվանդ
Ադենին-դեզամինազ	20.09±0.8	62.54±1.02	9.54±0.47	-	19.28±0.99	16.66±1.03
Ադենոզին-դեզամինազ	69.81±2.01	184.53±2.2	19.24±0.83	-	23.59±0.1	22.87±0.72

Աղյուսակ 2. Առողջ մարդու արյան էրիթրոցիտներում ադենոզինդեզամինազի և ադենինդեզամինազի ներքոջային լոկալիզացիան (մկմ NH₃ 1գ հյուսվածքում, 9000 g, 20 րոպե)

Ֆերմենտներ	Էրիթրոցիտներ		
	Հոմոգենատ	նստվածք	վերնստվածք
Ադենինդեզամինազ	20.4±0.20	0.11±0.02	20.15±0.27
Ադենոզինդեզամինազ	68.40±0.92	0.04	67.0±0.68

Աղ. 2-ը վկայում է, որ և ադենազը և ադենոզինդեզամինազը բարձր ակտիվություն ցուցաբերում են վերնստվածքում, այսինքն ունեն ցիտոպլազմատիկ լոկալիզացիա: Ֆերմենտների հատկությունների ուսումնասիրման նպատակով իրականացրել ենք նաև էրիթրոցիտների հոմոգենատների վերնստվածքի հեֆիլտրացիա սեֆադեքս G-150-ով: Ֆերմենտները ենթարկվել են մասնակի մաքրման, բացահայտվել են ֆերմենտների իզոենզիմները: Էրիթրոցիտների վերնստվածքի հեֆիլտրացիայի կորագիծը [նկ.3,4] ցույց է տալիս, որ արտահայտվել է 2 գագաթ՝ ցածրամոլեկուլյար և բարձրամոլեկուլյար սպիտակուցների ձևով, որոնք էլ դրսևորված են 2 իզոենզիմներով: Ինչ վերաբերում է ֆերմենտի սուբստրատի հանդեպ ունեցած խնամակցությանը, ապա պետք է նշել, որ մեր տվյալները չեն համապատասխանում գրականության տվյալներին:



Նկ.1. Առողջ մարդու արյան էրիթրոցիտների ադենինդեզամինազի Լայնուիվեր-Բերկի կորը:


Ինչպես երևում է (նկ.1,2) առողջ էրիթրոցիտներից անջատված ադենազը և ադենոզինդեզամինազը ցուցաբերում են բավականին բարձր խնամակցություն իրենց սուբստրատների նկատմամբ՝ ադենազ- $K_m=1,3 \times 10^{-3} M$, ադենոզինդեզամինազ $K_m=1,2 \times 10^{-3} M$: Սակայն գրականության տվյալները վկայում են, որ ադենոզինդեզամինազը մարդու էրիթրոցիտներում ներկայացված է $K_m=0,25 \times 10^{-3} M$ արժեքով, այսինքն խնամակցությունը առավել բարձր է [7]: Այս ամենը լրացուցիչ վկայություն է կատարվող հետազոտությունների զարգացման օգտին:

Հոդվածում


բերված

նյութ


թը արժեքավոր տեղեկություն է տալիս տվյալ ֆերմենտների վերաբերյալ: Եվ այս ֆերմենտների հայտնաբերումը կոնկրետ տուբերկուլոզի դեպքում հետաքրքրու թյուն է ներկայացնում էնզիմադիագնոստիկայի տեսակետից: Սակայն ադենազի և ադենոզինդեզամինազի ակտիվությանը, հատկություններին, փոխանակության ճանապարհներին վերաբերող շատ հարցեր մնում են չբացահայտված: Եվ նպատակահարմար է հետազոտությունները այս ուղղությամբ շարունակել:



Նկ.2. Առողջ մարդու արյան էրիթրոցիտների ադենոզինդեզամինազի Լայսինիվեր-Բերկի կորը:



Նկ.3. Առողջ մարդու արյան էրիթրոցիտների ադենինդեզամինազի իզոէնզիմային սպեկտրը



Նկ.4. Առողջ մարդու արյան էրիթրոցիտների ադենոզինդեզամինազի իզոէնզիմային սպեկտրը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Давтян М.А., Хачатрян М.А.* Адениндезаминазная активность в различных биологических объектах, МАНЕБ, 9, вып.3, с.44-46, 2004
2. *Силакова А.* Микрометод определения аммиака глутамина в тканевых трихлоруксусных экстрактах, Вопросы мед. химии, 5, с.538, 1962.
3. *Соковнина Я.М.* Ингибитор аденазы тромбоцитов здоровых людей, Вопросы мед. химии, XX, в. 3, с.425-427, 1977.
4. *Соковнина Я.М., Дебов С.С.* Аденаза тромбоцитов крови здоровых обезьян и обезьян с разной выраженностью гемобластоза, Бюллетень эксперим. биолог. и медиц., 11, с. 555-556, 1977.
5. *Соковнина Я.М.* Аденинаминогидролаза: распространение, свойства, новые аспекты изучения, Вопросы мед. химии, 28, 2, с. 9-20, 1982.
6. *Титаренко О.Т.* Перспективность определения активности аденозиндезаминазы в биологических жидкостях при туберкулезе, Проблемы туберкулеза, М., 5, с.52-54, 1996.
7. *Agarwal R.P. et al*, ADA from human erythrocytes, Methods Enzymol., 67, p.502-507, 1978.
8. *Amicosante M.*, Rational use of immunodiagnostic tools for tuberculosis infection; guidelines and cost effectiveness studies, New Microbiologica, 33, 93-107, 2010.
9. *Banales J.J., Pineda P.R.*, Searching for Tuberculosis in the pleural space, Chest Physicians, 116, 1, 3-5, 1999.
10. *Esmond R. Long*, On the presence of adenase in the human body, J. Biol. Chem., 15, 449-461, 1913.
11. *Gakis C., Naitana A.* ADA activity in the diagnosis of infectious diseases, Infect Med., p.219-232, 1994.
12. *Giblett E.R.* Recombinant Human adenosine deaminase/ADA, Lancet 2, 1067, 1972
13. *Hillebrand P.J.* Ascitic fluid ADA insensitivity in detecting tuberculous peritonitis in the US, Hepatology, 24, 1408-1412, 1996.
14. *Mathur P.C., Tiwari K.K.*, Diagnostic value of ADA activity in tubercular serositis, Indian J.Tuberc., 53, p.30-32, 2006.
15. *Riguelme A.J.* Value of ADA in ascitic fluid for the diagnosis tuberculous peritonitis, J. Clin. Gastroenterol., 40, p.705-710, 2006.

Ստացվել է 07.09.2011



**Փորձարարական և տեսական հոդվածներ · Экспериментальные и теоретические статьи ·
·Experimental and theoretical articles·**

Հայաստանի կենսաբ. հանդես, 1(64), 2012

ՎԱՆՀՈՒՏՏԻ ԱՍՊԻՐԱԿԻ ԿՐԿՆԱԿԻ ԾԱՂԿՄԱՆ ԵՎ ԱՃԻ ՄԱՍԻՆ

Ռ.Կ. ՄԻՍՈՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
simonyan.ruzan@mail.ru*

Հոդվածում քննարկվում է արժեքավոր գեղազարդ թփատեսակ Վանհուտտի ասպիրակի (*Spiraea vanhouttei*) կրկնակի ծաղկման հնարավոր մեխանիզմը և կլիմայական գործոնների դերը այդ գործընթացում: Դիտարկվում են վեգետատիվ և գեներատիվ ընձյուղների աճի ցուցանիշները գարնանը՝ զանգվածային ծաղկման փուլում և աշնանը՝ երկրորդ ծաղկման ժամանակ: Ցույց է տրված, որ ըստ աճի ցուցանիշների գեներատիվ ընձյուղները ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը զիջում են վեգետատիվ ընձյուղներին, ինչը պայմանավորված է պլաստիկ նյութերի՝ ծաղկման վրա առատորեն ծախսվելու հանգամանքով: Իսկ աշնանը որոշիչ է ապիմիլյատների արտահոսքը դեպի պահեստավորող օրգաններ: Եզրակացություն է արվում, որ Վանհուտտի ասպիրակի կրկնակի ծաղկման հնարավորությունը պայմանավորված է գեներատիվ բողբոջների հիմնադրմամբ ծաղկմանը նախորդող տարում:

*Վանհուտտի ասպիրակ – երկրորդ ծաղկում – աճ – վեգետատիվ և
գեներատիվ ընձյուղ – կենսամետրիկ չափումներ*

В статье обсуждается возможный механизм второго цветения ценного декоративного кустарника спиреи Вангутта (*Spiraea vanhouttei*) и роль климатических факторов в этом процессе. Рассматриваются показатели роста вегетативных и генеративных побегов весной – в период массового цветения и осенью – во время второго цветения. Показано, что по показателям роста генеративные побеги как весной, так и осенью уступают вегетативным побегам, что связано со значительной тратой пластических веществ на цветение, осенью же большое значение имеет отток ассимилятов в запасающие органы. Делается вывод, что возможность второго цветения спиреи Вангутта обусловлена заложением генеративных почек в год, предшествующий цветению.

*Спирея Вангутта – второе цветение – рост – вегетативный и
генеративный побег – биометрические измерения*

The article discusses the possible mechanism of second inflorescence valuable decorative shrubbery *Spiraea vanhouttei* and role of climate factors in this process. Indexes of growth vegetative and generative shoots in spring – in the period of mass inflorescence and in autumn – in the period of the second inflorescence were considered. It is shown, that on growth indexes generative shoots both in spring and in autumn yield to vegetative shoots, which are connected with considerable expenditure of plastic matters on inflorescence. In autumn the outflowing of photosynthesis products in to the stock organs is of considerable significance. It is concluded that possibility of second flowering of spiraea is connected with the formation of flower buds a year before the inflorescence one.

*Spiraea vanhouttei – second inflorescence – growth – vegetative and
generative shoots – biometric measuring*

Յուրաքանչյուր բույսի կյանքում կարևորագույն և բեկումնային շրջան է անցումը վեգետատիվ աճից ռեպրոդուկտիվ զարգացմանը: Այդ անցումը պայմանավորված է որոշակի ֆիզիոլոգիական փոփոխություններով, որոնք տարբեր բուսատեսակների մոտ ընթանում են տարբեր արագությամբ և արտաքին միջավայրի պայմանների տարբեր համադրությամբ: Տարբեր բույսեր էապես տարբերվում են միմյանցից ծաղկման ռիթմով, քանի որ ծաղիկը պատմական գործոնի՝ ընտրության արդյունք է, և նրա մորֆոգենեզը, կառուցվածքը և զարգացումը մշակվել են միջավայրի որոշակի պայմաններին բույսերի հարմարվելու ընթացքում:

Չնայած ծաղկման պրոցեսի բազմաբնույթ ուսումնասիրություններին [1, 2, 16], շատ հարցեր դեռևս պարզաբանման կարիք ունեն: Հայտնի է, որ չնայած բարեխառն լայնությունների բազմամյա շատ բույսեր մեկ վեգետացիոն շրջանում ծաղկում են մեկ անգամ, երբեմն որոշ տեսակների մոտ նկատվում է կրկնակի ծաղկում: Այս երևույթի ուսումնասիրությունը ունի տեսական և գործնական նշանակություն: Կրկնակի ծաղկման պատճառների բացահայտումը կարող է օգտակար լինել գեղագարդ պարտեզագործության և կանաչապատման գործընթացներում, նաև՝ նպաստել ծաղկման պրոցեսը խթանող գործոնների ավելի խորը ուսումնասիրությանը և ղեկավարմանը:

Ինչպես վկայում են գրականության տվյալները [3, 4, 7, 14], կրկնակի ծաղկման երևույթը դիտարկվել է հիմնականում բնափայտային տեսակների և որոշ բազմամյա խոտաբույսերի համար: Թփատեսակների վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան: Մինչդեռ կրկնակի ծաղկման ուսումնասիրությունը բույսերի տարբեր կենսաձևերի մոտ թույլ կտա ընդլայնել պատկերացումները այդ երևույթի մասին, բացահայտել դրա օրինաչափությունները և մշակել տեսական դրույթներ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, սույն աշխատանքի նպատակն է արժեքավոր գեղագարդ թփատեսակ Վանհուտեի ասպիրակի երկրորդ ծաղկման ուսումնասիրությունը:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել վարդագգիների ընտանիքի ներկայացուցիչ Վանհուտեի ասպիրակը (*Spiraea vanhouttei* (Briot) Zbl.): Այն հանդիսանում է կանտոնյան և եռաբլթակ ասպիրակների հիբրիդը (*S. cantoniensis* x *S. trilobata*): Թփերի բարձրությունը կազմում է 1-1,5 մ: Տերևները հակադարձ ձվաձև են, ատամնավոր կտրտված եզրով, 3-5 բլթանի, նրանք հերթադիր են, պարզ, կոթունավոր, առանց տերևակիցների: Տերևաթիթեղը ողորկ է, մերկ, երկարությունը՝ 3-3,5 սմ: Ծաղիկները մանր են, ձերմակ, հավաքված խիտ կիսագնդաձև ողկույզանման ծաղկաբույլերում, որոնք դասավորված են գեներատիվ ճյուղերի ամբողջ երկարությամբ՝ կարճ ընձյուղների գագաթներում: Պտուղը բազմատերևապտուղ է, պտուղները հասունանում են հոկտեմբերին:

Թփերի կյանքի առաջին տարում ընձյուղների վրա առաջանում են կողքային ճյուղեր և հիմնադրվում են ծաղիկներ, իսկ ծաղկումը սկսվում է երկրորդ տարուց: Որոշ տարիներին դիտվում է Վ. ասպիրակի կրկնակի ծաղկում: Բնորոշ է բազմաթիվ ընձյուղների գոյացումը՝ 10 տարեկան բույսերի մոտ դրանց քանակը կազմում է 30-60: Վ. ասպիրակը հիմնականում բազմանում է կտրոններով կամ սերմերով:

Հետազոտությունը կատարվել է Երևանի բուսաբանական այգում 2010 թ. Վեգետացիոն սեզոնի ընթացքում: Վեգետատիվ և գեներատիվ ընձյուղները հավաքվել են առաջին, զարնանային ծաղկման ժամանակ՝ զանգվածային ծաղկման փուլում (մայիս) և երկրորդ՝ աշնանային ծաղկման շրջանում (սեպտեմբերի վերջին տասնօրյակ, 23.09.10):


